ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Կորպորատիվ կառավարման գնահատման թերթիկը (Corporate Governance ScoreCard, այսուհետ՝ **«Սքորքարդ»**) քանակական, վերլուծական գործիք է, որն օգտագործվում է կազմակերպությունների կորպորատիվ կառավարման որակը գնահատելու համար:

Սքորքարդի հիմնական նպատակը ոչ թե իրավական համապատասխանության, այլ կորպորատիվ կառավարման ավելի բարձր չափորոշիչներին հետևելու կազմակերպության գործելաոճի գնահատումն է:

Սքորքարդը թույլ է տալիս՝

- գնահատել կազմակերպության կառավարման գործելաոճը և հետևել դրա զարգացումներին կամ թերացումներին,
- համեմատել միևնույն խմբի տարբեր կազմակերպությունների (օրինակ՝ ցուցակված ընկերությունների, ֆինանսական կազմակերպությունների, ՊՄԸ-ների) կորպորատիվ կառավարման ոլորտում գրանցած արդյունքները,
- համեմատել տարբեր ոլորտների կազմակերպությունների, երկրների կորպորատիվ կառավարման փորձն ու գործելաոճը:

Սքորքարդը բազմաֆունկցիոնալ գործիք է և կարող է օգտագործվել տարբեր շահառուների կողմից:

Սքորքարդը կարող է լինել պետական կարգավորման ու վերահսկողության, հանրային վերահսկողության, ինքնակարգավորման գործիք:

Սքորքարդը չի լուծում կորպորատիվ կառավարման խնդիրները: Այն կորպորատիվ կառավարման որակի բարոմետր է, որը կարող է ուղղորդել ոլորտի բարելավումները:

Սքորքարդի կիրառումը Հայաստանում

Սքորքարդը նպատակ է հետապնդում աջակցել կազմակերպություններին բարելավել կորպորատիվ կառավարման իրենց գործելաոճը՝ խթանելով ՀՀ կորպորատիվ կառավարման կանոնագրքի (Կանոնագիրք) կիրառումը:

Սքորքարդի հենանիշը Կանոնագիրքն է:

Սքորքարդի ցուցանիշները մշակվել են՝ հաշվի առնելով Կանոնագրքի հիմնարար սկզբունքների և դրանց բացատրությունների հիմքում ընկած տրամաբանությունը:

Սքորքարդի ցուցանիշների մշակման համար առաջնորդող սկզբունք է հանդիսացել դրանց չափելիության ապահովումը:

Ցուցանիշների գնահատման համակարգը եռաստիճան է.

- 1-ը՝ առկա է լիարժեք համապատասխանություն Կանոնագրքի սկզբունքի տրամաբանությանը:
- 0.5-ը՝ առկա է մասնակի համապատասխանություն Կանոնագրքի սկզբունքի տրամաբանությանը:
- 0-ն՝ առկա է անհամապատասխանություն Կանոնագրքի սկզբունքի տրամաբանությանը:

Սքորքարդն ապահովում է կշռված գնահատում, որը թույլ է տալիս՝

- արտացոլել տարբեր բաժինների և ցուցանիշների հարաբերական կարևորությունը,
- կենտրոնանալ և առաջնահերթ ուշադրություն դարձնել կառավարման առավել առանցքային բաղադրիչների վրա,
- ստանալ ավելի իրատեսական վերջնական գնահատական:

Սքորքարդը կարող է կիրառելի լինել՝

- ցուցակված ընկերությունների,
- Կանոնագրքին կամավոր միացած ընկերությունների,
- առաջնահերթ ՊՄԸ-ների համար:

Սքորքարդով գնահատման հնարավոր եղանակներն են՝

- ինքնագնահատումը,
- արտաքին աջակցությամբ կամ խորհրդատվությամբ ինքնագնահատումը,
- արտաքին գնահատումը:

Սքորքարդով գնահատմանը կազմակերպությունների մասնակցությունը կարող է լինել՝

- կամավոր՝ պայմանագրային հիմունքներով,
- կամավոր՝ հանրային վերահսկման շրջանակներում,
- պարտադիր՝ առանձին խումբ կազմակերպությունների համար:

Սքորքարդի սկզբնական կիրառման ժամանակահատվածում նպատակահարմար է, որ գնահատման զեկույցը լինի անհատական և հասցեագրվի միայն գնահատումն անցած կազմակերպությանը:

Կորպորատիվ կառավարման գնահատման թերթիկը *մշակվել է Կորպորատիվ Կառավարման Կենտրոնի կողմից Միջազգային մասնավոր ձեռնարկատիրության կենտրոնի աջակցությամբ Միացյալ Թագավորության (ՄԹ) միջազգային զարգացման շրջանակում՝ ՄԹ կառավարության կողմից ֆինանսավորվող* ***«Արձագանքելով Հայաստանում քայքայիչ կապիտալի սպառնալիքներին. Փուլ III»*** *ծրագրով:*

Փաստաթղթում արտահայտված կարծիքները պատկանում են նյութի հեղինակներին և հնարավոր է՝ ոչ միշտ համընկնեն ՄԹ կառավարության և Միջազգային մասնավոր ձեռնարկատիրության կենտրոնի պաշտոնական քաղաքականությանը կամ պաշտոնական դիրքորոշմանը:

ԻՄԱՆԱԼ ԱՎԵԼԻՆ